1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» և «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր» և «Գյուղական և քաղաքային համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականները պետական պատվերով ստացող պետական մարմիններին և կազմակերպություններին բաշխելու մասին» N 716 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման NN 1 և 2 հավելվածների՝

ա. 12-րդ կետում «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն» բառերով,

բ. 13-րդ կետում «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն» բառերով,

գ. 21-րդ կետում «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն» բառերով,

դ. 22-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշման NN 1 և 2 հավելվածները լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 31.1-ին կետով.

«

31.1.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	2 օրինակ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: